

ՀԱՎԵԼՎԱԾ

«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոց» հիմնադրամի
կառավարման խորհրդի 20.06.2022թ.
թիվ 08/01-Լ որոշման

խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան



ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

ք. Երևան,
2022թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հատուկ ուսուցման սույն ծրագրով (**այսուհետ՝ Հատուկ ծրագիր**) սահմանվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման քննությունները (համապատասխան մոդուլը) չհանձնած (բավարար միավոր չստացած), ինչպես նաև որակավորման քննություններին անհարգելի պատճառով չմասնակցած ունկնդիրների՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական դպրոց**) կողմից կազմակերպվող հատուկ ծրագրով ուսուցման նվազագույն պայմանները, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացակարգը:

2. Հատուկ ծրագրով ուսուցումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման քննություններին (համապատասխան մոդուլին) մասնակցած և բավարար միավորներ չստացած, ինչպես նաև որակավորման քննություններին անհարգելի պատճառով չմասնակցած ունկնդիրների (**այսուհետ՝ շրջանավարտներ**) համար:

II. ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

3. Հատուկ ծրագրով ուսուցումը կազմակերպվում է շրջանավարտների կողմից ՀՀ փաստաբանական դպրոցին ուղղված գրավոր դիմումի հիման վրա:

4. Շրջանավարտը դիմում կարող է ներկայացնել՝

1) որակավորման քննությունների արդյունքները հրապարակելուց հետո՝ 15 (տասնհինգ) օրվա ընթացքում, եթե արդյունքները չեն բողոքարկվել և չեն բողոքարկվելու.

2) որակավորման քննությունների արդյունքները բողոքարկելու դեպքում՝ Պալատի խորհրդի որոշման կամ դատարանի վճռի ուժի մեջ մտնելու պահից՝ 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

5. Սույն Կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքում Հատուկ ծրագրով ուսուցումը կազմակերպվում է շրջանավարտի դիմումը մուտքագրվելու պահից երկու ամսվա ընթացքում:

6. Սույն Կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում Հատուկ ծրագրով ուսուցումը կազմակերպվում է շրջանավարտի դիմումը մուտքագրվելու պահից վեց ամսվա ընթացքում:

7. Հատուկ ծրագրով ուսուցման ընթացքում շրջանավարտի կողմից որակավորման քննության արդյունքները բողոքարկվելու դեպքում հատուկ ծրագրով ուսուցումը դադարեցվում է, իսկ շրջանավարտի վճարած գումարը չի վերադարձվում:

8. Հատուկ ծրագրով ուսուցումը ներառում է ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպված որակավորման քննության միայն այն փուլը կամ բաղադրիչը,

որից բացասական գնահատական է ստացել կամ որին անհարգելի պատճառով չի մասնակցել շրջանավարտը:

9. Հատուկ ծրագրով ուսուցումն իրականացվում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հաստատած ժամանակացույցով: Հատուկ ծրագրով ուսուցումն անցկացվում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի սահմանած ժամաքանակով, որը յուրաքանչյուր բաղադրիչի մասով չի կարող պակաս լինել՝ 6 (վեց) ակադեմիական ժամից որակավորման քննության բանավոր փուլը չհանձնած շրջանավարտների համար և 12 (տասներկու) ակադեմիական ժամից որակավորման քննության գրավոր փուլը չհանձնած շրջանավարտների համար:

10. Պալատի խորհրդի որոշմամբ հաստատված Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի համաձայն անցկացված որակավորման քննությունը չհանձնած շրջանավարտների հատուկ ծրագիրը յուրաքանչյուր բաղադրիչի մասով չի կարող պակաս լինել 6 (վեց) ակադեմիական ժամից (ներառյալ ինքնուրույն աշխատանքի ժամերը):

11. Հատուկ ծրագրով ուսուցումն անցկացվում է ինչպես խմբային, այնպես էլ անհատական կարգով՝ ըստ դասացուցակի:

12. Հատուկ ծրագրով ուսուցումը յուրաքանչյուր բաղադրիչի մասով անցկացվում է գործնական պարապմունքների (հիմնականում ըստ ուղղվածության իրավիճակային խնդիրների լուծում, ինքնուրույն աշխատանք) ձևով: Դասընթացները կարող են կազմակերպվել նաև հեռավար եղանակով:

13. Հատուկ ծրագրով ուսուցումն անցնելուց հետո ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը շրջանավարտին տրամադրում է տեղեկանք (**այսուհետ՝ Ավարտական տեղեկանք**) Հատուկ ծրագրով ուսուցում անցած լինելու վերաբերյալ: Ավարտական տեղեկանքի կրկնօրինակը փոխանցվում է ՀՀ փաստաբանների պալատին:

14. Շրջանավարտը համարվում է Հատուկ ծրագրով ուսուցում չանցած, եթե բաց է թողել ընդհանուր ժամաքանակի առնվազն քսան տոկոսը՝ անկախ պատճառից: Սույն կետում նշված դեպքում շրջանավարտին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից ըստ շրջանավարտի չհանձնած փուլի կամ բաղադրիչի կազմակերպվող հերթական հաջորդ կիսամյակի (կիսամյակների) հատուկ ծրագրով ուսուցմանը:

15. Հատուկ ծրագրով ուսուցում չանցած շրջանավարտին չի տրամադրվում Ավարտական տեղեկանք: Շրջանավարտի պահանջով կարող է տրամադրվել համապատասխան տեղեկատվություն դասընթացների մասնակցության ծավալի վերաբերյալ:

16. Հատուկ ծրագրով ուսուցման հետ կապված սույն կարգով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի իրավական ակտերով:

III. ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԸ

17. Հատուկ ծրագրով ուսուցման վճարը սահմանվում է՝

- 6 (վեց) ակադեմիական ժամ և ավել (մինչև 11 ակադեմիական ժամը) դասընթացների համար՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.
- 12 (տասներկու) ակադեմիական ժամ և ավել դասընթացների համար՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

18. Վճարը կատարվում է մինչև դասընթացների մեկնարկը՝ պայմանագրի հիման վրա:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. 2022թ. գարնանը կազմակերպված որակավորման քննությունը (համապատասխան մոդուլը) չհանձնած (բավարար միավոր չստացած), ինչպես նաև որակավորման քննություններին անհարգելի պատճառով չմասնակցած ունկնդիրները (շրջանավարտները) կարող են հատուկ ծրագրով դասընթացներին մասնակցելու համար դիմել ՀՀ փաստաբանական դպրոցին մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

20. Հատուկ ծրագրով ուսուցման հետ կապված սույն կարգով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի իրավական ակտերով:

21. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2022թ. հունիսի 21-ից: